

ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ



Պետական կառավարման յուրաքանչյուր ոլորտում ձևավորված հիմնախնդիրները հաճախ պայմանավորված են ոչ այնքան զուտ իրավական, որքան իրավական-հոգեբանական գործոններով: Ընդ որում, այս չափանիշներով վերլուծությունների ու գիտական հետազոտությունների որոշակի պակասը հնարավորություն չի տալիս համարժեք պատկերացում կազմել ոչ միայն առկա հիմնախնդիրների, այլև դրանց ծագման նախապայմանների ու հնարավորին արդյունավետ լուծման ուղիների մասին: Սույն հոդվածում խնդիր ենք դրել անդրադառնալ ոչ այնքան հարցադրումների զուտ իրավական, որքան իրավական-հոգեբանական ասպեկտներին, որպեսզի կարողանանք ապահովել համային հետազոտություն՝ կապված պետական վերահսկողության և հարակից ինստիտուտների կիրառման ոլորտում գրեթե ավանդույթների վերածված երևույթների հետ:

Պետական կառավարման ոլորտը՝ իրավունքի, մշակույթի և հոգեբանական չափանիշներով հետազոտություններ կատարող բազմաթիվ գիտնականներ գտնում են, որ հոգեբանական նախարարական դրվագածությունը մեծամասամբ պայմանավորված է պետական համակարգում տվյալ աշխատակցի գրաված տեղով և գործառույթների բնույթով: Այսպես, վերլուծելով ծառայողների վարքագիծի տարաբնույթը դրսորումները, միջազգային ճանաչված քաղաքագետներ Դեյվիդ Լ. Վեյմերը և Էյդեն Ռ. Վայնինգը արձանագրել են հետևյալը. «Քաղաքականության վերլուծաբանների համար ամենալուրջ էթիկական հակասությունները սովորաբար կապված են պատվիրատուի նկատմամբ պատասխանատվության և այլ արժեքների միջև հակադրությունների հետ: Օրինակ, աշխատանքի կորուստն ուղղակիորեն ազդում է վերլուծաբանի և նրա ընտեսական տնտեսական և հոգեբանական բարեկեցության վրա»¹:

Պետական վերահսկողության ինստիտուտը, տնտեսության ազատականացման ուղղակի

թելադրանքով ենթարկվեց արմատական վերափոխումների, որի հիմքում դրվեց ձեռնարկատիրության ոլորտում պետության անհարկի միջամտությունը բացառելու դիրքորոշումը: Մասսամբ այս խնդիրը կարելի է լուծված համարել, սակայն մի շարք հանգամանքներ՝ փորձի ակնհայտ պակասը, ոչ բավարար իրազեկվածությունը, հնարավորինս սեղմ ժամկետներում կտրուկ քայլեր ձեռնարկելու միտումները, գերատեսչական շահերով դեկավարվելու անհիմն ձգումները և այլն, լուրջ խոչընդուն հանդիսացան անհրաժեշտ հայեցակարգ մշակելու և բացառապես դրա շրջանակներում զարգացումներ ապահովելու տեսանկյունից:

Խորհրդային իրավունքի տեսությունը հստակ սահմանազատում էր «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթները, մասնավորապես «հսկողության» տակ նկատի էր ունեցվում բացառապես օրինականության չափանիշներով իրականացվող ստուգման գործառույթը, իսկ «վերահսկողության» դեպքում՝ ինչպես օրինականության, այնպես էլ՝ արդյունավետության չափանիշները: Այսպես, դատախազական ընդհանուր հսկողության դեպքում դատախազը պարտավոր էր իրավական ակտը գնահատել բացառապես օրինականության տեսանկյունից: Առ չեր կարող եզրակացնելուն տալ այդ ակտի արդյունավետության վերաբերյալ, մինչդեռ, ժողովրդական վերահսկողության կոմիտեն, օրինակ, իրավական ակտը գնահատում էր ինչպես օրինականության, այնպես էլ՝ արդյունավետության տեսանկյունից:

Կարծում ենք՝ վերը նշված դասակարգությունը գերծ էր կառավարման մեթոդաբանության որևէ սոցիալիստական ենթատեսաստից և կարող էր կիրառելի լինել նաև կառավարման հետազարեկումներն իրականացնելիս: Ընդ որում, իներցիայի այն, իրոք, կիրառման մեջ դրվեց նաև հետազարեկումներին, սակայն ընդհանուր հայեցակարգի և տեսական անհրաժեշտ գինավածության բացակայությունը հանգեցրեց նրան, որ իիշյալ եզրույթները

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կիրառելիս այլևս որևէ չափանիշ հաշվի չի առնվում, պարզապես դրանք օգտագործվում են կամայականորեն՝ առանց խորանարու դրանց տարբերության մասին։ Հետաքրքիր մի դիտարկում, իրավական համակարգը արմատական բարեփոխումների ենթակելիս, գրեթե մշտապես ելակետ է ընդունում այն դիրքորոշումը, ըստ որի նախկին իրավական համակարգի յուրաքանչյուր առանցքային հարցադրման իմքում ընկած է եղել գաղափարական կոնկրետ ուղղաձություն, տվյալ քաղաքական համակարգի գաղափարախոսությամբ պայմանավորված ուսմունք և այլն։ Մինչդեռ, գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ հաճախ դրանք պայմանավորված են լինում սույն ձևավորված ավանդույթներով (օրինակ, այդպիսի դասակարգում ընդունված էր նաև ցարական Ռուսաստանի վարչարարության մասին տեսությունում), ներ մասնագիտական պատկերացումներով, գուտ գործնական շահերով և այլն։

Նկատենք, որ միջազգային փորձը ևս վկայում է այս կամ այն ոլորտում կամ կազմակերպությունում փաստացի վիճակը պարզելու առնչությամբ տարբերակված մոտեցում դրսորելուն նախապատվություն տալու մասին։ Այսպես, ներկայում լայնորեն կիրառվող «մոնիթորինգ» և «առողջություն» եզրույթներն իրենց բովանդակությամբ գրեթե համահունչ են համապատասխանաբար՝ «վերահսկողություն» և «հսկողություն» եզրույթներին։

Այն, որ հիշյալ հասկացությունների կիրառման հարցում այլևս բացակայում է որևէ արամաբանություն և միասնականություն, վկայում են հենց կոնկրետ օրենսդրական ակտերը։ Բերենք մի քանի մասնավոր օրինակներ։

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ և 71-րդ հոդվածներում ամրագրված են վերացական վերահսկողության և կոնկրետ վերահսկողության ինստիտուտները, մինչդեռ՝ սահմանադրական դատարանն իրավասու չել միջազգային պայմանագիրը կամ ազգային իրավական ակտը գնահատել արդյունավետության կամ նպատակահարմարության տեսանկյունից։ Տվյալ դեպքում, այսպես կոչված, դատախազական բարձրագույն հսկողությանը փոխարինելու եկած նոր ինստիտուտն անհարկի ծեռք բերեց իր բովանդակությանը շիամապատասխանող անվանում։ Հավելենք նաև, որ իր գործունեության սկզբնական շրջանում սահմանադրական դատարանը որոշ դեպքերում իսկապես հանդես էր գալիս, որպես վերահսկողություն իրա-

կանացնող ատյան, քանզի իր եզրակացություններում, հատկապես հիմնավորումների մասով, ոչ միայն զմահատում էր միջազգային պայմանագրերի կամ իրավական ակտերի սահմանադրականության², այլև նպատակահարմարության տեսանկյունից։ Այսպես, սահմանադրական դատարանն իր 1998թ. հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Ամերիկայի Միացյալ Նահանգների արտահանման-ներմուծման բանկի միջև 1997թ., հուլիսի 21-ին Վաշինգտոնում ստորագրված ծրագրերի աջակցման հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» որոշմամբ արձանագրել է։ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է ծրագրերի ֆինանսավորումը հեշտացնելու և երաշխավորելու նպատակով ձեռնարկել կազմակերպական իրավական բնույթի մի շարք քայլեր»։ Տվյալ դեպքում հարց է ծագում, կառավարության նման պարտավորությունը ի՞նչ իրավական արժեք ունի միջազգային պայմանագրի սահմանադրականության հարցի տեսանկյունից։

Կարծում ենք՝ այս դեպքում ևս իրեն զգացնել է տվել զուտ հոգեբանական գործոնը, որի պայմաններում, մասնավանդ, երբ դեռ չէին ձևավորվել վերահսկողության շրջանակների և իրականացման եղանակների վերաբերյալ հստակ պատկերացումներ, վճռորոշ է դարձել հնարավորինս լայն լիազորություններով հանդես գալու ձգտումը։

Այն, որ որևէ նշանակություն չի տրվում «հսկողություն» և «վերահսկողություն» եզրույթների տարբերությանը, վկայում է նաև «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որում միևնույն գործառույթը որակվում է ինչպես հսկողություն, այնպես էլ՝ վերահսկողություն։ Այսպես, օրենքի 17-րդ և 18-րդ հոդվածներում հարկային մարմինների ստուգողական գործառույթը որակվում է որպես հսկողություն, իսկ 33-րդ հոդվածով՝ վերահսկողություն։

Ցանկությունը կազմակերպության բացահայտման և դրանց բովանդակության բացահայտման հարցում թերությունները անխտիր իրենց բացահայտման ներազբեցությունն են ունեցել հիշյալ ոլորտին վերաբերող օրենսդրական ակտերում և իրավակիրան պրակտիկայում։

Տերևս, այդ հիմքով կարելի է բացատրել

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

այն, որ օրենսդրությունում բացակայում են պետական վերահսկողության առնչվող այնպիսի կարևոր հարցադրումներ, ինչպիսիք են՝

ա) ստուգման տեսակները և դրանց իրականացման առանձնահատուկ ընթացակարգերը,

բ) ուսումնասիրության իրականացման ընթացակարգերը,

գ) տեսչական գործառույթների իրականացման ընթացակարգերը,

դ) ստուգման, ուսումնասիրության և տեսչական գործառույթների իրականացման հիմքերը:

Ստուգման, ուսումնասիրության և տեսչական յուրաքանչյուր գործառույթ, հանդիսանալով պետական հսկողության և վերահսկողության իրականացման ինքնուրույն միջոց, որպես կանոն, դրսևորվում է պետական լիազոր մարմին և տնտեսավարող սուբյեկտ փոխհարաբերություններում։ Կառավարման գուտ վարչական մեթոդների գերակայության պայմաններում այս մոտեցումը գործում է գրեթե առանց բացառության։ Սակայն տնտեսության ազատականացման և կառավարման կարգավորման ու տնտեսավարման մեթոդների ներդրմամբ աստիճանաբար նախապատվությունը տրվում է համընդհանուր բնույթի ուսումնասիրություններին ու վերլուծություններին, որոնց դեպքում հարկ չի լինում, առանց որևէ հիմքի, միջամտել որևէ տնտեսավարող սուբյեկտի գործունեությանը։

Միաժամանակ, ուսումնասիրության պարագայում բնավ պարտադիր չէ, որ այն իրականացվի կոնկրետ որևէ տնտեսավարող սուբյեկտում։ Այսպես, «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ անասնաբուժության բնագավառում լիազոր մարմինը «ուսումնասիրում և վերլուծում է կենդանական ծագման մթերքի ու հումքի, անասնաբուժական դեղամիջոցների, անասնաբուժական միջոցների, կերերի և լրացակերերի արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, տեղափոխման և իրացման գործընթացները»։

Կարծում ենք՝ ոչ միայն ստուգման, այլև ուսումնասիրության տակ ավանդաբար պետք է նկատի ունենալ բացառապես կոնկրետ տնտեսավարող սուբյեկտում փաստական վիճակը պարզելու նպատակով իրականացվող գործառույթը։ Թերևս, դա է պատճառը, որ նույն անասնաբուժության բնագավառում լիազորված մարմինը, ուսումնասիրություններ իրականացնելիս, բացառապես դեկալարվում է «Հայաստանի Հանրապետությու-

նում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, մինչդեռ՝ հիշյալ օրենքը սահմանում է բացառապես կոնկրետ տնտեսավարող սուբյեկտում իրականացվող ստուգումների և ուսումնասիրությունների անցկացման կարգը։

Այն, որ ուսումնասիրությունների տակ ավանդաբար հասկացվում է միայն կոնկրետ տնտեսավարող սուբյեկտում համապատասխան գործառույթներ իրականացնելը, հիմնավորվում է նաև այն փաստարկով, որ գործնականում միայն հենց այդ լիազորությունն է այս կամ այն չափով կարգավորվում, իսկ ընդհանուր բնույթի ուսումնասիրություններ անցկացնելու ընթացակարգ սահմանված չէ։ Օրինակ, պարզ չէ, թե ինչ ընթացակարգով կարող է անասնաբուժության բնագավառում լիազոր մարմինն ուսումնասիրելու և վերլուծելու կենդանական ծագման մթերքի արտադրության գործընթացները, մասնավորապես՝ միջայի տեղեկատվություն պետք է ձեռք բերի, ի՞նչ աղբյուրներից, ինչպիսի մեթոդանությամբ պետք է գնահատի իր արամադրության տակ եղած տեղեկատվությունը։ Ստացվում է, որ յուրաքանչյուր դեպքում դա սուկ թելադրված է լինում տվյալ պաշտոնյայի մասնագիտական պատրաստվածության աստիճանով, փորձով, բայց ոչ երբեք նախապես սահմանված ընթացակարգով։

Ընդ որում, առավել մտահոգող է այն, որ հիշյալ բնույթի ուսումնասիրությունները գործնականում նենագիտիչում և իրականացվում են ստուգումների մասին օրենսդրության ընթացակարգով նախատեսված կանոններով։ Գործնականում համարժեք չի ընկալվել ինչպես ուսումնասիրության, այնպես էլ՝ տեսչական գործառույթի էությունը։

Մինչդեռ, անգամ ստուգումների մասին վերը նշված օրենքն է բացառում այդպիսի գործելանքը. այսպես, օրենքի հենց 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Սույն օրենքով նախատեսված տնտեսավարող սուբյեկտների պաշտոնատար անձանց և ստուգում իրականացնող անձանց իրավունքներն ու պարտականությունները գործում են սույն կետի իններորդ պարբերությամբ սահմանված ուսումնասիրությունների անցկացման դեպքում»։ Նկատենք, որ 9-րդ պարբերությունը վերաբերվում է միայն հարկային ստուգումներին, ինչից բխում է, որ այլ ոլորտներում ցանկացած բնույթի ուսումնասիրություն կատարելիս, բացարձակապես հիմնագործ է այդ օրենքի վրա հրում անելը։

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Նկատենք, որ նույն 1-ին հոդվածում տրված է միայն ուսումնասիրության ընդհանուր բնորոշումը, որում դարձյալ ընդգծվում է պետական լիազոր մարմին և տնտեսավարող սուբյեկտ փոխհարաբերությունը. «Ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը՝ վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում՝ պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է, բացառությամբ սույն կետի իններորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի»: Այնուհետև, նույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ պարբերությունում սահմանվում է, որ. «ուսումնասիրություն է նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմինների, ինչպես նաև գյուղատնտեսության նախարարության տեսչական մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ստուգումից հետո տրված հանձնարարականների կատարման ճշտման ընթացակարգը»:

Այն, որ երբեմն վերահսկողության բնագավառում դրսորդվում են որոշ սուբյեկտիվ հակումներ, այդ թվում՝ իշխանատենչության տարրեր, որոնք նաև ուղղեցվում են կոռուպցիոն գործուներով, կարծես վիճահարույց չեն: Խոսուն է այն, որ այդ հակումները հաշվի առնելով՝ որոշ տեսաքանություն, միանգամայն իրավացիորեն գտնում են, որ ցանկացած երևույթի վերահսկողության, գնահատման դեպքում վճռորոշ պետք է լինեն նվազագույնը երկու կանոնները. «Գնահատման մեջ հիմնական բարոյական պարտականությունները կարելի է խստացնել երկու կանոնում. մի վնասիր ուսումնասիրվող մարդկանց և մի խեղաքյուրիր տվյալները: Բայց չնայած իրենց պարզությունը, այս կանոնները կարող են բախվել միմյանց: Խելամիտ մարդիկ առաջնությունը տալիս են կամ մեկին, կամ էլ մյուսին՝»:

Այսպիսով, անհիմն է տեսչական ցանկացած գործառույթ համարել, որպես ուսումնասիրություն, իսկ ուսումնասիրությունն արդեն՝ ստուգման կանոններով իրականացվող գործառույթ:

Առավել անընդունելի է ստուգման, ուսումնասիրության և տեսչական գործառույթների հա-

մար անվերապահորեն իրավական հիմք համարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Այսպես, ըստ Հայաստանի Հանրապետության վարչապետի վերահսկողական ծառայության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից՝ նշված օրենքի 30-րդ հոդվածի պահանջներով հարուցվել է 18 վարչական վարույթ: Տվյալ դեպքում վերացականորեն հիմք է ընդունվել այն, որ վարչական վարույթ հարուցելու հիմքերից է անձի դիմումը և բողոքը, իսկ քննարկվող դեպքում եղել է անձի դիմում: Սակայն տվյալ դեպքում անտեսվել են մի շարք հիմնադրույթներ.

- տվյալ դեպքում «դիմում» հասկացությունը չպետք է շփոթել իրավախախտման մասին հաղորդման հետ, քանզի նշված օրենքի կարգավորման առարկան ոչ թե վարչական իրավախախտումների վերաբերյալ ընթացակարգը կամ վարույթն է, այլ՝ հանրային իրավունքի ոլորտում իրականացվող վարչական մարմինների այն գործողությունները, որոնք չեն առնչվում վարչական վարույթների առանձին տեսակների հետ. «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»: Այսինքն, տվյալ դեպքում վարչական իրավախախտումների վերաբերյալ դիմումի առկայության դեպքում հարկ էր դեկավարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,

- եթե վարույթ է հարուցվում նշված 30-րդ հոդվածով սահմանված կարգով, ապա բացառապես կարող էր ընդունվել այնպիսի վարչական ակտ, որն ընդհանուր ոչինչ չունի վարչական տույժ նշանակելու մասին վարչական ակտերի հետ: Այսպես, նախ, նշված օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեություն է, իսկ «Վարչական ակտը, դրա տեսակները և ձևերը» վերտառությամբ 53-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտով կարող են սահմանվել ոչ թե պատասխանատվության միջոցներ, այլ՝ սուկ պարտականություններ: Նկատենք, որ ըստ վերը նշված տեղեկանքի, նշանակվել է սուկանը՝ 350

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հազար դրամի չափով:

Ինչևէ, թերված օրինակը վկայում է մի կողմից վերահսկողական և հսկողական գործառույթների իրականացնելիս օրենսդրության ոչ համարժեք ընկալման, մյուս կողմից՝ ինչը պակաս անհանգստացնող չէ, ոչ միատեսակ կիրառման բազմաթիվ փաստերի մասին:

Ըստ էության, ոլորտին առնչվող մասնագետները մեծամասամբ միայն հպանցիկ են ծանոթ օրենսդրությանը և բավարար խորությամբ չեն տիրապետում դրա սկզբունքներին ու հիմնադրույթներին: Կարծում ենք, ոլորտը չափազանց բազմանիստ է և անհրաժեշտ է նշված գործառույթներն իրականացնելիս համարել բոլոր օրենսդրական ակտերը և ապահովել համարի նոտեցում:

Սակայն օրենսդրության ոչ համարժեք կիրառման երեսույթը պայմանավորված է ոչ այնքան դրա անկատարությամբ, որքան՝ վերահսկողության կամ հսկողության կոնկրետ ոլորտում վարչարարության իրականացման հստակ ուղեցույցների բացակայությամբ: Ուստիմնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս վարչարարության այդ բարդ ոլորտում ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների կիրառման անհրաժեշտության վրա բավարար չափով ուշադրություն չի դարձվում, մինչեւ այս խնդիրը չափազանց կարևոր է, քանի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից հիշյալ գործառույթների իրականացման ընթացքում բույլ տրված յուրաքանչյուր, այդ թվում ոչ էական իրավախսությ կարող է հիմք հանդիսանալ վարչարության արդյունքներով ստեղծվող ակտերը անվավեր ճանաչելու համար:

Գործնականում մտավախսություն կար, որ իրավախսութման մասին հաղորդումը կարող է անհարկի նույնացվել վարչարարության ոլորտում դիմումի հետ, թերևս, դա էր պատճառը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. մայիսի 29-ի թիվ 594-Ա որոշման նախագծում առաջարկվել էր՝ հատուկ ընդգծել, որ վերջինս չի տարածվում իրավախսութմների վերաբերյալ հաղորդումների հիման վրա հարուցվող և իրականացվող վարչական վարույթի վրա: Ընդ որում, իրավախսութման մասին հաղորդման դեպքում պետք է հարուցվի ոչ թե պարզապես վարչական վարույթ, ինչպես վարվել են առողջապահության նախարարության համապատասխան կառույցում, այլ՝ վարչական իրավախսութմների վերաբերյալ վարույթ:

Կարծում ենք՝ առավել խոցելի է տեսչական

գործառույթների իրավական կարգավորման վիճակը: Խնդիրն այն է, որ այս գործառույթների իրականացման իրավական կարգավորում գրեթե գոյություն չունի, ինչի արդյունքում հաճախ տեսչական գործառույթները, օրինակ՝ ստուգայցերը, զննությունները և այլն, իրավանացվում են ստուգումների համար օրենսդրությամբ նախատեսված կարգով, ինչն անիրավաչափ է: Թերևս, բացառություն են կազմում այն սակավաթիվ ոլորտները, որտեղ այս կամ այն չափով սահմանված են տեսչական գործառույթների անցկացման ընթացակարգերը: Օրինակ, պետավոտտեսչությունն իր տեսչական գործառույթներն իրականացնում է «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

Հաճախ տեսչական ստուգումները օրենսդրությամբ անհարկի նույնացված են ուսումնասիրության գործառույթի հետ, ինչն անհարկի տարրներցումների ու թյուրըմբոնման տեղիք է տալիս:

Տեսչական գործառույթների հստակ կանոնակարգման անհրաժեշտությունը պայմանավորված է իրավախսախտումների և անվտանգության ապահովման կանխարգելման առանցքային խնդրով: Տեսչական գործառույթները չեն կարող իրականացվել ստուգման համար նախատեսված կանոններով, քանզի որևէ կերպ իրավաչափ չեն կարող համարվել ստուգման համար նախատեսված ժամկետները, նախասպես իրազեկել և այն:

Հայաստանի Հանրապետության վարչապետի վերահսկողական ծառայության այն դիրքուումը, ըստ որի ուսումնասիրությունների (հետազոտությունների) կատարումը սահմանված է ոլորտը կարգավորող օրենքներով, միայն մասամբ է իրավաչափ: Նախ, այդ օրենքներով ուսումնասիրությունների ընթացակարգերը սահմանված չեն: Բացի այդ, հիշյալ մարմինները կոչված են ոչ միայն ուսումնասիրություններ, այլև՝ տեսչական գործառույթներ իրականացնել, որոնց իրավական կարգավորումը ևս բացակայում է:

Նշված բոլոր օրենքները հիմնականում համարվում են նյութական իրավունքի աղբյուրներ, քանզի բացառապես սահմանում են լիազորություններ, սակայն անտեսում են դրանց իրականացման կարգը սահմանելու անհրաժեշտությունը: Այսպես, օրինակ, «Անսանարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը անասնարության պետական տեսուչին վերապահում է բավականին լայն լիազորու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուններ, այդ թվում՝ ստուգման մասին օրենքի ենթակայությունից դուրս գտնվող ստուգումներ իրականացնելու առումով՝ ստուգում է հանրապետության շուկաների տեղանքում, կենդանական ծագման մթերք և հումք իրացնող կետերում անասնաբուժական փորձաքննության գործընթացը և դրա իրականացման համար համապատասխան պայմանների առկայությունը, արգելելու անասնաբուժական փորձաքննության կարգի պահանջներին չհամապատասխանող կենդանական ծագման մթերքի և հումքի իրացումը և այլն: Սակայն հարց է առաջանում. իսկ ի՞նչ ընթացակարգով կարող է տեսչությունը որոշել՝ համապատասխանում է տվյալ մթերքը սահմանված պահանջներին:

Ավելին, նոյն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ ստուգումները պետք է իրականացվեն Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական պետական վերահսկողության կարգի համաձայն, սակայն այդպիսի կարգ դեռևս չի ընդունվել, թեպետ՝ օրենքն ընդունվել է 2005թ. հոկտեմբերի 24-ին: Հավելենք նաև, որ հիշյալ հարցերը կանոնակարգված չեն նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. նոյեմբերի 21-ի թիվ 1915-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության կանոնադրությամբ:

Վերևում մենք արդեն ընդհանուր գծերով անդրադանք ոչ էական խախտումների հիմքով վարչական ակտերն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու խնդրին, սակայն, հաշվի առնելով հետազոտման թեմայի հետ այդ հարցի սերտ առնչությունը, նպատակահարմար ենք գտնում այդ հարցադրման առավել հանգամանալից վերլուծությունը:

Նախ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 63-րդ հոդվածների ուսումնափրությունը ցույց է տալիս, որ վարչական ակտն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու իրավական հիմքը օրենքի որոշակի խախտումներն են, իսկ այդպիսիք են համարվում հենց նոյն օրենքով վարչական ակտին ներկայացվող պահանջները (55-րդ հոդված) չկատարելը: Արտաքուստ այն տպավորությունն է, որ տվյալ դեպքում տեղին չեն որևէ հարց բարձրացնել, քանզի օրենքով հատակ ամրագրված են գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները, որոնց խախտումն էլ

հենց հիմք է տվյալ ակտը առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու համար: Ի դեպ, հենց այսպիսի պատճառաբանություն է բերվում նաև այն պրակտիկ իրավաբանների կողմից, որոնք դեմ են ոչ էական խախտումները վարչական ակտն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու համար, որպես հիմք չհամարելուն: Մասնավորապես, վերջիններս գտնում են, որ օրենքն արդեն իսկ սպառիչ սահմանել է այն «էական» պահանջները, որոնք խախտելը չի կարող անհետևանք մնալ: Այնուհետև, այն եզրահանգումն է արվում, որ որևէ մեկն իրավասու չէ օրենքով ամրագրված պահանջները համարել ոչ էական:

Կրկնում ենք, արտաքուստ բավականին կուր տրամաբանություն կա այս մոտեցման մեջ, սակայն հարցի անհրաժեշտ խորքային ուսումնափրությունն ապահովելու տեսանկյունից, փորձենք անդրադանալ այն հարցին, թե որքանով են այդ պահանջները հստակ ու սպառիչ ամրագրված: Այսպես, եթե վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու իրավական հիմքերը վիճահարույց չեն, ապա նոյնը չի կարելի ասել այն անվավեր ճանաչելու իրավական հիմքերի մասին: Այսպես, նշված օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել,

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը,

գ) ակտից պարզ չէ, թե որոշակիորեն ուժ է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում,

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն»: Այս հիմքերի պարագայում, խևապես, անհմաստ է խոսել վարչական ակտի իրավաչափությունը հարցականի տակ դնելու մասին:

Սակայն անդրադանակ վարչական ակտն անվավեր ճանաչելու որոշ հիմքերի և նոյն չափանիշներով վերլուծենք դրանց իրավական արժեքը: Նշված օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող իրավական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ: Իսկ օրենքի խախտում առկա է, եթե չեն կատարվել, օրինակ այդ օրենքի 55-րդ հոդվածով ամրագրված

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պահանջները և այլն: Արդյո՞ք «օրենքի խախտում» եզրույթը բավականաշափ հստակ է, որպեսզի կարողանանք միանչանակ հանգել այն եզրակացության, որ դրանք բռնորդ էլ էական իրավախսառուումներ են և անվերապահորեն հիմք կարող են հանդիսանալ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար:

Սեր եզրակացությունն այս առնչությամբ բացասական է. նախ, հակառակ որոշ պնդումների, վերը նշված ձևակերպումներից բխում է, որ օրենքը բնավ չի տարանջատել էական խախտումները՝ ոչ էականից, քանզի պարզապես իրավական նշանակություն է տրվել օրենքի բոլոր խախտումներին: Բացի այդ, օրենքի պահանջների մի որոշ մասը կամ միանչանակ բնույթ չունի (օրինակ, նշված օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական ակտը, որպես կանոն, պետք է տեղեկություններ պարունակի նաև այն ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ, որոնք կատարվել են ակտի ընդունման կապակցությամբ), կամ խիստ անորոշ ու տարողունակ է (օրինակ, նշված օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ ու հսկանալի), կամ վիճահարույց է դրանց էական նշանակությունը (օրինակ, նշված օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի «ը» կետի համաձայն՝ վարչական ակտը պետք է պարունակի ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է ակտը բողոքարկվել):

Բնորոշ է այն, որ վարչական ակտը հստակ և հսկանալի ձևակերպված լինելու վերաբերյալ ոչ պաշտոնական մեկնաբանություններում ևս բավարար չափով պարզաբանված չէ այդ հարցադրումը: Օրինակ, անդրադարձնալով վարչական ակտի որոշակիությանը՝ «Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վերաբերյալ» հրատարակության հեղինակները նշում են. «Օրինակ, հոդահատկացման ակտից հստակ պետք է երևա, թե որ հոդատարձքը, ինչ չափսերով, երբ և ում է հատկացվում, ինչ նպատակով, ինչ ժամկետով և ինչ իրավունքով (սեփականության, օգտագործման)»⁵: Տվյալ դեպքում հարց է ծագում՝ արդյոք, չի⁶ կարող դատարանն անվավեր ճանաչել այն վարչական ակտը, որում հսկանալի չեն ներկայացված վարձակալության պայմանները: Կարծում ենք՝ այս հեպքում պատասխանը բացասական է, քանզի, օրինակ անձի համար ոչ մի էական նշանակություն չունի, թե իրեն ինչպիսի փաստաթղթով է ժանուցվում վարչական ակտի բողոքարկման ժամկետը և այլն:

Վիճարկելի չէ, օրինակ, բողոքարկման

ժամկետն ու մարմինը նշելու պահանջը, սակայն վարչական մարմինը դա կարող է անել ցանկացած այլ եղանակով՝ կից գրությամբ, առանձին ծանուցագրով և այլն, սակայն այդ սուսկ ձևական խնդիրը չի կարող բավարար հիմք հանդիսանալ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար: Մեկ այլ օրինակ, օրենքի պահանջներից է նաև վարչական ակտն ընդունող պաշտոնատար անձի ստորագրությունը, ինչն իրավաչափ պահանջ է: Սակայն գործնականում վարչական ակտը անվավեր է ճանաչվում սուսկ այն հիմքով, որ, օրինակ, ստորագրության մի չնչին մասը դուրս է մնում ձևադրից (նույն կերպ, վարչական ակտն անվավեր է ճանաչվում այն հիմքով, որ կնիքի մի մասը դուրս է մնացել ձևադրից) և այլն:

Համոզված ենք՝ սրանք գուտ տեխնիկական բնույթի, գրագրության ոչ էական խախտումներ են, որոնց հիման վրա վարչական ակտն անվավեր ճանաչելը, թերևս, լուրջ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում: Գործնականում դատարանը կամ վերադարձական մարմինը ստանում է անսահմանափակ իրավաչափ հնարավորություն՝ սոսկ ձևական նկատումով անվավեր ճանաչելու վարչական ակտը:

Իհարկե, առավել նախընտրելի կլիներ, որպեսզի վարչարարություն իրականացնող պաշտոնատար անձինք այնքան պատրաստված լինեն, որ բացառվեր նմանաբնույթ իրավիճակը, սակայն հարկ է նկատել, որ տվյալ դեպքում կարող ենք խսել բացարձակապես կատարյալ, իդեալական վիճակի մասին, ինչն այնքան էլ իրատեսական չէ: Բացի այդ, հարկ է հարցը քննարկել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության շահավետության տեսանկյունից: Այսպես, հարց է ծագում՝ վերը նշված տեխնիկական բնույթի խախտումները որևէ կերպ խախտում են այդ իրավունքներն ու ազատությունները: Կարծում ենք՝ այս դեպքում պատասխանը բացասական է, քանզի, օրինակ անձի համար ոչ մի էական նշանակություն չունի, թե իրեն ինչպիսի փաստաթղթով է ժանուցվում վարչական ակտի բողոքարկման ժամկետը և այլն:

Տվյալ դեպքում, կարող է և հակառակ հետևանքը լինել. անհարկի անվավեր կարող է ճանաչվել այն վարչական ակտը, որը միանգամայն ընդունելի է անձի համար: Ընդ որում, այս դեպքում խնդիրն ամբողջությամբ չի կարող լուծել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

64-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված այն դրույթը, համաձայն որի.

«Բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը, որի հիման վրա ծագում են միաժամանակյա կամ ընթացիկ գույքային պարտականություններ, կամ որն այդպիսի պարտականությունների համար նախադրյալ է համարվում, կարող է ուժը կորցնել միայն դրա անվավեր ճանաչվելու պահից, եթե այդ ակտով օգուտ ստացողը, վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքի ուժով արդեն ձեռք է բերել տրամադրված օգուտները կամ տնօրիմել է գույքը, որի հետևանքով դրանք չեն կարող վերադարձվել, կամ վերադարձվելու դեպքում կարող է էական վճառ պատճառվել օգուտ ստացողին: Այս դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները»: Նկատնենք, որ անձը կարող է օգտվել այս օրենսդրական դրույթից, եթե զուտ ժամանակագրական առումով արդեն բավարարում է ստացել, հակառակ դեպքում վերջինս որևէ բավարարում չի ստանա:

Անդրադառնալով պետական կառավարման ոլորտում իրավական ակտերի պահանջների կատարման հարցադրմանը՝ ժամանակակից հետազոտողները գտնում են, որ խնդիրը ոչ այնքան իրավական ակտերի դրույթների անվերապահ կատարումն է, որքան հանրության շահերի, ըստ ամենայնի, պաշտպանությունը: Ըստ այդ հետազոտողների՝ մարդու իրավունքների և շահերի գերակայությունը կարող է հիրավի իրատեսական լինել միայն այն դեպքում, եթե գերակայում է հենց մարդկանց իրավունքների գերակայությունը՝ նաև իրավական կարգավորման շրջանակներից դուրս. «Նոր պետական կառավարման խնդիրն է ոչ միայն հնարավորինս խնայողաբար և արդյունավետորեն իրականացնել օրենսդրական մանդատները, այլև ներազել հասարակության բոլոր անդամների կյանքի բարելավմանն ուղղված քաղաքականության

վրա և իրականացնել դրանք»¹:

Ամփոփելով պետական վերահսկողության առնչությամբ վերը նշված տեղեկատվությունը և դրանց առնչությամբ ներկայացված դատողությունները՝ փորձենք համակարգված տեսքով ներկայացնել որոշ եզրահանգումներ՝

- մշակել ստուգումների, ուսումնասիրությունների և տեսչական գործառույթների անցկացման մեթոդական ընդհանուր ուղեցույց, որը հիմք կհանդիսանա յուրաքանչյուր իրավասու գերատեսչության համար կոնկրետացված մեթոդական ուղեցույց մշակելու համար,

- հստակեցնել այն իրավական ակտերի ցանկը, որոնք անհրաժեշտ է սեղմ ժամկետում ընդունել, որպեսզի սպառիչ ու ամբողջական կարգավորվեն վերը նշված հարաբերությունները, մեկ փաթեթում ներառել այդ իրավական ակտերի նախագծերը, որպեսզի բացառվեն ներքին հակասություններն ու անհարկի կրկնությունները,

- կազմակերպել թեմատիկ գիտաժողովներ, ստուգումներ, ուսումնասիրություններ ու տեսչական գործառույթներ իրականացնող ստորաբաժնումներ ունեցող նախարարությունների և հանրապետական կառավարման մարմինների իրավաբանական ծառայությունների հետ, քանզի ներկա վիճակը վկայում է այդ ծառայությունների աշխատաքրում մասնագիտական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակի բացակայության խնդիրների մասին,

- վերանայել ոչ էական խախտումներով ուղեցվող վարչական ակտերը և անվավեր ճանաչելու վերաբերյալ օրենսդրական դրույթները:

Կարծում ենք՝ նշված եզրահանգումներն ամրողությամբ չեն ընդգրկում արդի հիմնախնդիրները, սակայն դրանք որոշակիորեն կնպաստեն դրանց լուծմանը և կնպաստեն առկա այլ խնդիրների բացահայտմանն ու լուծմանը:

¹Տե՛ս Քաղաքականության վերլուծություն: Հասկացություններ և պրակտիկա, 2010թ., Երևան, «Պետական ծառայություն» հրատարակչություն, էջ 61:

²Տվյալ դեպքում պայմանականորեն «սահմանադրականություն» եզրույթը օգտագործել ենք, որպես «օրինականության» խնայութություն տարատեսակ, թեպես չենք բացառում, որ վերջինս իր բովանդակությամբ շատ ավելի ընդգրկում է:

³Տե՛ս Վեյս Ք.Հ. Գնահատում, ծրագրերի և քաղաքականությունների ուսումնասիրության մեթոդներ, 2010թ., Երևան, «Պետական ծառայություն» հրատարակչություն, էջ 260:

⁴Հայաստանի Հանրապետության Վարչապետի վերահսկողական ծառայության 2010թ. արխիվներ:

⁵Տե՛ս «Հարցեր և պատասխաններ «Վարչապետի վերահսկողական ծառայության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վերաբերյալ», «Հարդ ընդ Սոֆթ» հրատարակչություն, Երևան 2007, էջ 113-114:

⁶Տե՛ս H.George Frederickson. Toward a New Public Administration, in Frank Marini, ad., Toward a New Public Administration (Scranton, PA: Chander, 1971), էջ 314: